

Մ Ա Յ Ր Ա թ Ո Ռ

Տառապող Հայութեան ջերմ բարեկամ, տասնեակ տարիներից ի վեր նորա համար անկեղծ ցաւակցող և գործող Լորդ Ջէյմս Բրայսի ծառայութիւնները գնահատելով, Ն. Սրբութիւնը հաճել էր տարւոյս Ապրիլ 27-ին առանձին Կոնդակով Իւր Հայրապետական օրհնութիւնն առաքել ի տրիտուր մեծ Անգղիացու մարդասէր գործի:

Այդ Կոնդակը մինչև վերջին ժամանակներս դեռ ևս պատեհութիւն չէր եղած յանձնել Վսեմ. Լորդին, վերջնիս հիւանդութեան պատճառով, թէև հայ արուեստի և գրչութեան՝ գեղեցիկ նմուշ այդ գործը վաղուց էր ուղարկուած Եւրոպայի առաջնորդ Գեր. Տ. Գէորդ արքեպիսկոպոս Իւթիւճեանին՝ պատշաճ եղանակով մատուցանելու այն:

Ն. Գերապատուութեան յանուն Վեհ. Հայրապետի զեկուցադրից յայտնուում է, որ ըստ կանխորոշ ժամադրութեան, Վսեմ. Լորդ Ջէյմս Բրայսի, անցեալ տարուայ նոյեմբ. 30-ին, ըստ Եւրոպական տօմարի (նոյ. 17, Եշ.), Եւրոպայի առաջնորդը, հետն ունենալով Լօնդոնի Հայկական Յանձնախմբի ամբողջ կազմը, բաղկացած ինն հոգուց, որին չկարողացաւ միանալ Մանչէստրի Յանձնախումբն անակնկալների պատճառով, մատոյց Ն. Վսեմութեան Հայրապետական օրհնութեան Կոնդակը, հետեւեալ խօսքերով.

«Ամենայն Հայոց Ս. Հայրապետն, իմ վեհաշնորհ Պետս, պատիւ ըրած է ինձ յղելու սոյն Օրհնութեան Կոնդակը, ամատուցանելու Ձերդ Վսեմութեան, իբրև յայտարար անկեղծ համակրանաց և խորին շնորհակալութեան առ Ձեզ, և որ ի սկզբանէ անտի տառապեալ Հայ ազգին սիրող և

համակրող եղած էք և, ամէն պարագայի, մանաւանդ վեր-
 «ջին և ներկայ շարունակեալ աղէտից մէջ՝ մեր թշուառ
 «հայրենակցաց պաշտպան հանդիսանալով և ըստ կարի
 «սրբելով թիւրաւոր Հայոց արտասուքն, և՛ խօսքով, և՛
 «գործով զօրավիգ էք եղած նոցա Անգղիական մեծ ազգի
 «առաջ, ինչպէս և դուրսը:

«Մատուցանելով Ազգիս Ս. Հայրապետի սոյն օրհնա-
 «ձիր Կոնդակը Ձեր Վսեմութեան, կը մաղթեմ, յանուն Ն.
 «Ս. Օծութեան, Ձեզ քաջառողջ և երկար կեանք, որ մխի-
 «թարութիւն է Հայ ազգիս համար, նոյն ջերմ պաշտպա-
 «նութիւնը ցոյց տալու նորան ապագայում ևս և զօրավիգ
 «լինելու նորա դատին»:

Պր. Յ. Մոստիճեան թարգմանեց Եւրոպայի առաջ-
 նորդի դիմումը, որին ի պատասխան Լորդ Ջէյմս Բրայս
 ասում է հետևեալը, խնդրելով յայտնել այս մասին Ն.
 Սրբութեան.

«Ձերդ ըստձր սրբազնութիւն

և և՛ զնստորեարք,

«Թորապէս յուզուած և անչափ պատուած եմ զգում
 «ինձ Ն. Սրբութիւն ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից
 «ուղարկուած Կոնդակի առաքմամբ և ջերմ շնորհակալիքս
 «եմ յայտնում նորան այն խօսքերի համար, որ ուղղել է
 «ինձ՝ իմ դէպի Հայկական դատն ունեցած երկարամեայ
 «առնչութեանս համար: Կը խնդրեմ հաւաստիացնէք Ն.
 «Սրբութեան իմ շնորհապարտութեանս և գնահատմանս
 «մասին, որ զգում եմ Իւր ասածների համար:

«Ճիշդ քառասուն տարի է անցել այն ժամանակից, երբ
 «առաջին անգամ այցելեցի ձիւնապսակ Արարատի ոտքերի
 «մօտ ապաստանած Էջմիածնի պատկառելի վանքը, այն վայրը
 «որ այնքան յարգի է և սուրբ ամբողջ Հայութեան համար,
 «որովհետև դարերի մի երկար շրջանում նոցա կրօնական
 «կեանքի կենդրոնն է եղած: Այդ ժամանակ էր, որ ես
 «ճանաչել սկսեցի և օգնել ցանկացայ Հայ ժողովրդին:
 «Ն. Սրբութեան նախորդներից մէկին — յիշատակաց ար-

շտանի և նշանաւոր Խրիմեան Կաթուղիկոսին — անձամբ
 ճանաչելու պատիւն եմ ունեցած, այն անձին, որի բնա-
 ւորութեան աղնութիւնը խորապէս ազդել է նոցա վերայ,
 որոնք տեսան նորան Անդղիայում և որին, ինչպէս ես
 շատ լաւ գիտեմ, խանդադատանքով են յիշում այն բոլոր
 զգայրերում, որ Հայ լեզուն է լսւում: Չնայելով, որ ան-
 կարող եմ եղած անել Հայկական դատի համար այն, ինչ
 որ կցանկանայի կատարել, սակայն այն փոքրիկ ծառայու-
 թիւնն ևս, ինչ որ կատարել եմ և մատուցանել եմ կա-
 րողացած՝ արել եմ ամենայն անկեղծութեամբ և ի բոլոր
 բարեւ, ուովհետեւ այդ իմ արտօնութիւնն եմ համարած,
 ինչպէս և պարտքս՝ պաշտպանել մի դատ, որ Քրիստո-
 ենէութեան և ազատագրութեան դատն է:

«Այս վերջին քառասուն տարիները անջինջ վշտա-
 կրութեան և տանջանքի տարիներ են եղած Հայերիդ հա-
 մար, իսկ վերջին երկու տարին, այդ շրջանի ամենասոս-
 ակալի օրերն են եղած: Մենք երեւակայել չէինք կարող, որ
 Արդիւ-Համիդի աննկարագրելի դաժանութիւններն ան-
 ցնել կարելի էր, սակայն երիտասարդ թիւրքերի կառա-
 զարութիւնը մտացրեց Արդիւ Համիդին իսկ, Կոտորած-
 ների և արտագաղթի այն զօրեղ թափն ու հոսանքը, որ
 ընոցա ձեռքով կատարուեցաւ՝ գերազանցեց բոլոր նախորդ-
 ները, մի քանի օրից լոյս տեսնող գրքի մէջ, Իուք կգրտ-
 ենէք այդ բոլորի համարաւութիւնը, ի մի ժողոված ա-
 կանատես վկաների ցուցումներով և հաւատարմամբ, և
 այդ անդր-գերազանց զազանութիւնները մտացնել են
 ստալիս Արեւելքի արիւնազանդ տարեգրութիւնները, եւ
 այդ ոճիրները կատարուած են մի կառավարութեան ձեռ-
 քով, որ յարգ ու պատիւ էր վայելում բոլոր յարաբա-
 ւելիւթ ազգերի կողմից: Այդ ահաւելի թշուառութիւններն ու
 տանջանքները կրելով Հայ ցեղը մի անգամ ևս ապացու-
 ցեց, թէ ինչպիսի արութեամբ և ուղղամիտ հաւատար-
 մութեամբ է փարած իւր Քրիստոնէական կրօնին և իւր
 բազմային աւանդութիւններին, որ երբէք թուլացած չէ
 իւր ինն դարեան տանջալից և հալածական կեանքի մէջ:

«Աերջին տարիների Հայութիւնը իրեն կատարեալ արժանի
 ցոյց տուեց իւր ազգային մարտիրոս-նահատակների և
 «հերոսների անուան, որ Հայ պատմագրութեան էջերի
 «մէջ անմեռ փայլով է շողում:

«Եւ երբ Ձեր ամենայն յարգանաց արժանի ծերու-
 շնազարդ Հայրապետին զեկուցանելու լինիք իմ ամենա-
 ջերմ զգացումներս այս կոնդակի համար, կարող կլինիմ
 «խնդրել հաղորդել Նորան այն ևս, որ թէ որչափ և խաւար
 «ու սոսկալի լինին տառապանքի այս օրերը, բայց և այնպէս
 «լուսոյ և յուսոյ մի ճառագայթ եմ տեսնում ես: Երբ Իաշ-
 «ենակիցները յաղթական կելլեն այդ ահեղ պայքարից, ինչպէս
 «մենք վստահութիւն և հաւատք ունինք, որ Նորա այդ-
 «պէս էլ կանեն, և շատ լաւ յայտնի է այս նկատմամբ
 «նոցա անդարձ որոշումը:—այն ժամանակ, ես կարծում
 «եմ, որ նոցա համար անհանդուրժելի պիտի լինի կան-
 «գուն թողնել թիւրք կառավարութիւնն այն վայրերում,
 «ուր նորա ամբողջ երկիրը Բրիտանական արեամբ են
 «սողողել և որտեղից նորա աշխատել են զլիսովին տեղա-
 «հան անել քաղաքակիրթութեան յառաջադէմ, արուես-
 «տի և վաճառաշահութեան մի ընդունակ մի ժողո-
 «ւոցը: Արդեօք Տաճկական մի այդպիսի Սուլթանու-
 «թեան մնալը կարտօնուի Փոքր Ասիայի որ և է անկիւ-
 «նում, թէ ոչ, դժուար է կանխորոշել, սակայն հաս-
 «տատ կարելի է ասել, որ ոչ Հայաստանում և ոչ
 «Երկրկիսում այդպիսի Սուլթանութեան գոյութիւնն
 «անհնար կլինի: Եւ երբ, անունն ամօթ չլինի տալ
 «թիւրքը (Unspeakable Turk) կհեռանայ և նորա փոխա-
 «րէն մի քաղաքակիրթ վարչութիւն կհաստատուի Հա-
 «ստանում,—մի վարչութիւն, որ ընդունակ կլինի
 «կեանքի և գոյքի ապահովութիւն տալ, աղատագրու-
 «թեան և խաղաղութեան կարիքը տարածելով ազգա-
 «բնակութեան վերայ,—ես կասկած չունիմ, որ Հայ ժո-
 «ղովուրդը կարող կլինի կրկին ոտքի կանգնել իւր ներկայ
 «աղէտների և թշուառութեան միջից և կրկին ցոյց տալու
 «այն սքանչելի ոյժը, որով պիտի վերաստանայ իւր թուա-

«Կան քանակն ու ներքին ոյժը, որ յաճախակի իւր ան-
 «ցեալ կեանքի մէջ է ցոյց տուել: Չեր ազգային կեանքը
 «չի կորչիլ: Դուք այն ցեղն էք, որ ամենից աւելի ընդու-
 «նակ է վերականգնել բարօրութիւնն այն երկրների, որ
 «աւերուած և տակուվերայ է եղած անթիւ արշաւանքների
 «պատճառով:

«Չեր անզղիացի բարեկամները յաճախ են խնդրած
 «Չեզ համբերութեամբ զինուել, — համբերութիւն՝ ճնշում-
 «ների կառավարութեան տակ, ճնշումներ՝ որ արդարաց-
 «նում են ապստամբութիւնը, եթէ ապստամբութիւնը յա-
 «ջողութիւն ունենար: Սակայն, այժմ, պիտի փորձեմ
 «խնդրել Չեզ ունենալ ոչ միայն համբերութիւն, այլ և
 «չաւազոյն ապագայի յոյսեր ևս ունենալ: Մենք մեր ա-
 «ղօթքներն ենք միացնում Հայ եկեղեցու և Չեր Ս. Կաթողիկոսի
 «աղօթքների հետ, որպէս զի այս յոյսերի իրա-
 «կանացման երկար սպասելու հարկ չլինի»:

Լօնդոնի Հայկական Միութեան նախագահ զնդապետ
 Գ. Գրիգորի կարդաց Կոնդակի անզղիէրէն թարգմանութիւնը,
 արտադրուած անզղիացի գեղազրի ձեռքով, յատուկ պատ-
 րաստել տուած, մեծ յաջողութեամբ, Մանչէստրի մէջ:

Լօրդ Զէյմս Իրայս խորապէս յուզուած կրկին իւր ամենախորին շնորհակալութիւնը խնդրեց յայտնել Ն. Սրբու-
 թեան, նորա օրհնութեան և զնհատական Կոնդակի հա-
 մար և հաւաստիացնել Ամենայն Հայոց Սրբ. Կաթողիկո-
 սին, որ իւր համար այդ Կոնդակը ամենաթանգակին սե-
 փականութիւնն է, որ ունի և ամենամեծ խնամքով ու մե-
 ծարանքով պիտի պահպանէ:

Գէորգ Արքեպիսկոպոսը մատոյց Ն. Վսեմութեան Հայ-
 րապետական Կոնդակը, որ գրուած էր արծաթեայ նկարէն
 և նուրբ քանդակներով զարդարուած մի գլանի մէջ, որ
 յատուկ խնամքով պատրաստել էր տուած Լօնդոնի Հայ-
 կական Միութեան Յանձնաժողովը, Լօնդոնում, որ վերջին
 խօսքն է Անզղիական ոսկերչական գործի և յանձնարար-
 ուած «Ոսկերիչների Ընկերութեան» խորհրդին (Goldsmiths'
 and Silversmiths' Company Ltd, Regent str, London): Ար-

Ժաթեայ գլանի մի երեօին բարձրաբանդակով երևում է Ս. Էջմիածինը, որի յետևի մասում երևում է ձիւնապատ Արարատը: Գլանակը հաստատուած է երկու ծայրից արծաթեայ յենարանների վերայ, որոնք հանգչում են ապանսէ գեղեցիկ պատուանդանի վերայ, վերջինս կրում է արծաթեայ մի փոքրիկ տախտակ, հետևեալ մակագրութեամբ:

From

The Catholicos of All Armenians

to

The Right Honorable Viscount Bryce, O. M.

in gratitude for his noble and generous
services to the Armenian Nation

April, 1916.

«Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից Ն. Վսեմութիւն
Լորդ Զ. Բրայսին, Ա. Խ. Ի նշան իւր ազնիւ և օգտաշատ
ծառայութեան առ Հայ ազգը»:

Վսեմ. Լորդն ընդունելով Կոնդակը, առանձին հետաքրքրութիւն է ցոյց տուել Կոնդակի նկարների նկատմամբ, և հնազոյն հայկական գրչութեան օրինակով, որոնք գեղեցիկ նմուշներ են մեր մանրանկարչութեան և գրչութեան արուեստի: Կարևոր բացատրութիւնը լսելուց յետոյ, կրկին և կրկին իւր շնորհակալիքն է յայտնել, խընդրելով Գէորգ արքեպիսկոպոսից, զեկուցանել Ն. Ս. Օժու-
թեան:

* *
*

Դեկտ. 16-ին պաշտօնական գործերով Մ. Աթոռ եկաւ Երևանի փոխ թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոս և Ն. Սըրբութեան ներկայանալու շնորհն ունեցաւ:

* *
*

Դեկտ. 21-ին Մ. Աթոռ ժամանեց պաշտօնական գործով Երևանի նահանգապետի օգնական Ալեքսանդր Գալիգիչ Պանչուլիձե և Ն. Ս. Օժութեան առանձին ունկնդրութեան արժանացաւ:

* *
*

Նոր Տարուայ առթիւ Մ. Աթոռում կար հանդիսաւոր պատարագ, որից յետոյ կայսերական և Հայրապետական մաղթանք, պատարաիչն էր Գեր. Տ. Յուսիկ արքեպիսկոպոս:

Ն. Սրբութիւնը, թեթեակի հիւանդութեան պատճառով Տաճար իջնել չկարողացաւ: Նոյն պատճառով և Վեհափառ Հայրապետի մօտ պաշտօնական ընդունելութիւններ չկային այդ օրուայ առթիւ:

* *
*

Յունուար 5-ի երեկոյեան, Ն. Սրբութիւնը հաճեց Տաճար իջնել և ներկայ գտնուիլ Ճրագալոյցի Ս. Պատարագին, շնայելով իւր թեթեակի տկարութեան:

* *
*

Յունուարի 6-ին, Ն. Սրբութիւնը հաճեց Տաճար իջնել Ս. Պատարագի ժամանակ և ներկայ լինել Զրօրհնեաց հանդիսին, որ կատարուեցաւ Մ. Տաճարում, սովորական հանդիսաւորութեամբ և շքով:

Պատարագիչն էր Տ. Մատթէոս եպիսկոպոս:

Այդ օրը Ն. Սրբութեան մօտ նշանակուած էր ընդունելութիւն պաշտօնական անձերի, հաստատութիւնների ներկայացուցիչների և մասնաւոր անհատների համար:

* *
*

Յունուար 7-ին Ն. Սրբութեան Նոր Տարուայ և Մերձեան տօները շնորհաւորելու համար Մ. Աթոռ ժամանեցին Երևանից՝ Երևանի փոխ-թեմակալ Գեր. Տ. Խորէն եպիսկոպոս, քաղաքապետ յ. Ս. Խաչատրեան և քաղաքացիների կողմից յ. յ. Յովհաննէս Մելիքեան և Գէորգ

Ամիրեան, որոնք ամէնքն ևս արժանացան Ն. Վեհափառութեան առանձին ունկնդրութեան և օրհնութեան:

* *
*

Վեհ. Հայրապետը ցանկանալով առաւել մօտ և սերտ կապ հաստատել իւր հօտի հեռաւոր վայրերում ցրուած մասերի հետ և նոցա ամենքին կապել Մ. Աթոռի հետ, հաճել էր իրր նուիրակ ուղարկել իւր կողմից Եզիպտոսի առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ եպիսկոպոսին Հնդկաստան, Եթովպիա և Սուդան:

Տ. Թորգոմ եպիսկոպոսի Բամբէյից տուած հեռագիրը հաղորդեց, որ Ն. Սրբութեան նուիրակն արդէն հասել է այնտեղ դեկտ. 12-ին (լստ հ. տ.) և իւր նուիրակութեան գործին ձեռնարկել: Հետզհետէ հասնող տեղեկութիւնները պարզեցին, որ Թորգոմ եպիսկոպոսի Հնդկաստան զնալու խնդիրը ուշացել էր ներկայ պատերազմական վիճակն ի նկատի ունենալով: Որի պատճառով հարկ էր տեսնուած առանձին արտօնութիւն ունենալ Հնդկաստանի անգղիական փոխ-արքայից, որպիսի արտօնութիւն ստանալու գործը գիւրացնելու համար մեծ օժանդակութիւն էր ցոյց տուած Ն. Սրբութեան նուիրակին Եզիպտոսի անգղիական կառավարութիւնը, ամէն դիւրութիւն և յարմարութիւններ ընձեռելով Տ. Թորգոմ եպիսկոպոսին:

Տ. Թորգոմ եպիսկոպոսը մեկնել է Եզիպտոսից նոյեմբ. 29-ին, Պորտ-Սայիդ, ուր նաւ մտնելով պիտի ուղևորուէր Բամբէյ: Իբրև թարգման անգղիական լեզուի, իւր հետ ունի յատուկ թարգման, յանձին սրօժ. Մուրադեանի, և իբրև եկեղեցական երաժիշտ՝ պ. Գեղամ Գէօրգեան:

Տ. Թորգոմ եպիսկոպոսն Ն. Վեհափառութեան կողմից տրուած նուիրակութեան կոնդակը թարգմանել է տուած անգղիերէն և բաղմաթիւ օրինակներ՝ հայ բնագիրը և անգղիերէն գեղեցիկ թարգմանութիւնը միասին, իբրև մի տեսրակ իւր հետ առել ցրուելու իւր նուիրակութեան վայրում: Տեսրակի առաջին երեսի վերայ զըտն-

ւում է Ս. Էջմիածնի նկարը, իսկ վերջին էջի վերայ
«Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Հնդկաստանի նուիրակութեան գործն աւարտելուց
յետոյ, Հայրապետական նուիրակը կանցնէ Սոււաւորա և
Ճաւա կղզիները: Սակայն ի նկատի ունենալով, որ այդ
կղզիները գտնուում են Հոլլանդական իշխանութեան տակ,
իրև նոցա ստացուածք: ուստի Բրիտանական Կառավա-
րութիւնը կանխօրէն դիմումներ է արած, այնտեղ գնալու
արտօնութիւնն ստանալու: Ապա վերադարձին նա կմտնէ
Եթովպիա և Սուդան, այն տեղի ջրուած Հայութեանն ևս
այցելելու:

* *
*

Յունուար 11-ին Մ. Աթոռ ժամանեց Տիփսից՝ Կով-
կասի Հայոց Բարեգործական ընկերութեան նախագահ պ.
Սամսոն Յարութիւնեան և Ն. Սրբութեան առանձին
ուսկնդրութեան արժանանալով, նոյն օրը վերադարձաւ
Երևան:

* *
*

Յունուար 15-ին Մ. Աթոռ եկաւ Երևանի նահանգա-
պետ Ա. Ե. Սարելիցիյ և արժանացաւ Ն. Սրբութեան
առանձին ուսկնդրութեան:

Պ. Նահանգապետը երկար հիւանդ, պառկած էր և
իւր ապաքինումից յետոյ պարտք էր համարել անձամբ
ներկայանալ Ն. Ս. Օճութեան օրհնութիւնն ստանալու
և տօները շնորհաւորելու:

* *
*

Յունուար 17-ին, Եղբ. Օգնութեան Յանձնաժողովի
անդամ Տ. Գէորգ վարդապետը մեկնեց Եղբ. Օգնութեան
գործերով Աշտարակ, կազմակերպելու այնտեղի Յանձնա-
խումբը և ի մօտոյ ծանօթանալու գաղթականների վիճա-
կի հետ:

Ի նկատի ունենալով նոյն շրջանի, գլխաւորապէս Ա-
պարանի շրջանի գաղթականների ծանր վիճակը կարգա-
դրուեցաւ Եղբ. Օգնութեան կողմից երեք վազոն ալիւր

ուղարկել, որպէս զի քաղցի մատնուելու վտանգի առաջն
առնուի. միաժամանակ և ուղարկելով բաւականաչափ նաւթ
և շաքար: Այս դրութիւնն աւելի ևս ծանրանում էր,
քանի որ կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան
պահեստի բացումն Աշտարակում մինչև այժմ, հանգա-
մանքների շնորհիւ, անկարելի եղաւ բանալ:

* * *

Մ. Աթոռի միաբան Տ. Ներսէս վարդապետ Տէր Մի-
քայէլեանը նշանակուած լինելով Ն. Սրբութեան կողմից
փոխանորդ Ն. Նախիջևանի վիճակի, մինչև փոխանորդու-
թեան պաշտօնի գնալը խնդրեց Ն. Սրբութեան արտօնու-
թիւնը, երկու ամսով բժշկութեան գնալ Տփլիս: Ն. Սըր-
բութիւնը բարեհաճեց արտօնել նորան այդ:

Տփլիսից Տ. Ներսէս վարդապետը իւր յունուար 18-ին
գրած մի խնդրով դիմելով Ն. Սրբութեան խնդրում է իրեն
ազատ կացուցանել հոգևոր կոչումից և Մ. Աթոռի միա-
բանութիւնից:

Ն. Սրբութիւնը, ի նկատի ունենալով, նորա խնդիրը
բարեհաճեց յունուարի 20-ին ազատ կացուցանել նորան
Մ. Աթոռի միաբանակցութիւնից, զրկելով նորան կուսա-
կրօն քահանայութեան կոչումից և վարդապետական աս-
տիճանից և դասելով նորան ի շարս աշխարհականների,
պատուիրելով Ս. Սինօղին կատարել պաշտօնական ձեւ-
ականութիւններն այս նկատմամբ:

* * *

Յունուար 23-ին Խարկով մեկնեց Ն. Սրբութեան
Թոյլտուութեամբ Մ. Աթոռից Տ. Գրիգորիս արեղան իւր՝
համալսարանական պետական վերջնական քննութիւնները
տալու և վերադառնալու Մ. Աթոռ:

Տ. Գրիգորիս արեղան, շնայելով, որ Մ. Աթոռի Հո-
գևոր Ճեմարանում դասեր ունէր, սակայն Ճեմարանի
Վարչութիւնը հնարաւոր գտաւ, յարգել նորա խնդիրը,
ազատ կացուցանել ուսուցչութիւնից, որպէս զի կարող
լինէր իւր վերոյիշեալ մտադրութիւնն ի կատար ածել: